

Գրադարանային գրիդ տեխնոլոգիաների գիտահետազոտական կենտրոն

Գլոբալացման արդի ժամանակաշրջանում գիտության և տեխնոլոգիաների համաշխարհային զարգացումները նոր մարտահրավերներ են առաջադրում նաև գրադարանավարներին, քանի որ նրանք ակտիվ դերակատարություն ունեն տեղեկատվական հասարակության կառուցման ճանապարհին: Բացի սրանից, թվային գրադարանները կենսական նշանակություն ունեն երկրի ընդհանուր զարգացման և միջազգային մրցունակության բարձրացման գործընթացում:

Ժամանակաշրջանի պահանջով տեղեկատվական շատ գործառույթներ փոխանցվում են տեխնիկական միջոցներին և համակարգիչներին: Ավտոմատացումը փոխում է ավանդական գրադարանի տեսքը ինչպես գրադարանավարի, այնպես էլ օգտվողի համար: Եթե առաջինի աշխատանքը դառնում է ավելի բարդ ու ծավալուն, ապա ընթերցողը ստանում է լայն հնարավորություն՝ օգտվելու տարաբնույթ ծառայություններից, որոնք մինչ այդ անհասանելի էին: Հասկանալի է, որ նման պարագայում վերանայման ու վերաիմաստավորման կարիք են զգում գրադարանային բազմաթիվ հասկացություններ: Համացանցը հիմնովին փոխում է պատկերացումները գրադարանային պաշարների հասանելիության և դրանք ընթերցողին մատուցելու նոր եղանակների նախագծման մասին: Ներկայումս նկատվում է էլեկտրոնային կրիչների վրա գրանցված նյութերի քանակի շարունակական աճ, և այս միտումը գնալով ավելի լայն թափ է ստանում:

Գրադարանային գրիդ տեխնոլոգիաների գիտահետազոտական կենտրոնը ստեղծվել է 2011 թ.: Բաժնի հիմնական առաքելությունը տպագիր արտադրանքի սկանավորումը, թվայնացումը, էլեկտրոնային պաշարների ստեղծումը, ձևավորումն ու պահպանումն է: Թղթային նյութերի թվայնացման առաջին քայլը դրա բնօրինակի սկանավորումը կամ նկարահանումն է, ապա ստացված պատկերների հիշելը թվային արխիվային նյութերի համար նախագծված ձևաչափերից որևէ մեկով: Տեղադրման առաջարկվող ձևաչափը PDF-ն է: Հիմնական նպատակը՝ այդ նյութերը համացանցում հասանելի դարձնելն է, որի համար անհրաժեշտ է կատարել այդ

նյութերի մատենագիտական նկարագրություն միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան: Բաժնում իրականացվում է գրադարանի հավաքածուներում առկա հայերեն հնատիպ (հրատարակման ժամանակաշրջան 1512-1800 թթ.), վաղ շրջանի հրատարակված (հրատարակման ժամանակաշրջան՝ 1801-1900 թթ.) և մինչև 1920 թ. հրատարակված գրքերի, նաև պարբերական

մամուլի թվայնացում: Սկանավորված նյութերը համապատասխան ծրագրերով մշակվում են («Adobe Photoshop») և պատրաստվում PDF ձևաչափով («Adobe Acrobat Professional»): Տեքստի ձանաչման համար օգտագործվում է «ABBYY FineReader» համակարգը: Այնուհետև նյութերը համապատասխանաբար տեղադրվում են մատենագիտական (Aleph և Koha) և լրիվ տեքստային (Greenstone) շտեմարաններում: Գրքեր են մուտքագրվում Սենտրալային կրպակ կամ վիրտուալ շտեմարանում:

Բացի համացանցում տեղադրելուց, գրադարանում սկանավորված գրադարանային նյութերը արխիվացվում են առանձին սերվերի վրա, որի կրկնօրինակը անվտանգության նկատառումներով արտաքին կոշտ սկավառակների վրա պահվում է առանձին մասնաշենքում:

Բաժնի գործառույթներից են՝

Հրատարակչական աշխատանքներ՝ գրադարանում հրատարակության պատրաստվող նյութերի շարվածք, սրբագրում և ձևավորում:

Ներքին ցանցի կառավարում՝ նախագծում, մոնտաժ և վերահսկում, համակարգային ծրագրերի և տեխնիկայի անխափան աշխատանք, հակավիրուսային ծրագրերով համակարգչային վիրուսների պարբերական ստուգում և մաքրում:

Գրադարանի կայքէջի ձևավորում՝ գրադարանի կայքէջի պատրաստում, ձևավորում, թարմացում:

Բաժնին կից գործում է ինտերնետի ազատ մուտքի սրահը (Թամանյանական մասնաշենք 2-րդ հարկ՝ 9:30-17:00), որտեղ ընթերցողները կարող են անվճար օգտվել համացանցից: Այն համալրվել է վերջին սերնդի բարձրորակ 15 համակարգիչներով, որոնք միմյանց միացված են ներքին ցանցով:

Բաժինը համագործակցում է Հայաստանի գրեթե բոլոր գրադարանների հետ, կազմակերպվում են անվճար դասընթացներ գրադարանավարների համար:

Մեր առաքելությունն է բարձրացնել հավաքածուների հասանելիության աստիճանը՝ ներառյալ գրականության կարևորագույն հրատարակությունները և գիտական նյութերը, պատմական փաստաթղթերը, ամսագրերն ու քարտեզները: Մեր գլխավոր նպատակն է ներկայացնել հայկական մշակութային ժառանգությունը, ինչպես նաև ցույց տալ մեր գրադարանի հավաքածուների հարստությունը, նաև կայունացնել և զարգացնել Հայաստանի ազգային գրադարանի կապն այլ գրադարանների հետ: